

ԲՆԱԳՐԻ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՈՃԱԿԱՆ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ
(ըստ Լ. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպի)

Թ. Ա. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Պատերազմ և խաղաղություն» վեպը համաշխարհային գրականության եզակի ստեղծագործություններից է ոչ միայն իր գեղարվեստական բարձր արժանիքներով, այլև պատմաշրջանի ընդգրկմամբ ու գեղարվեստական մարմնավորմամբ, լեզվի պատկերավոր միջոցների հարստությամբ ու ինքնատիպությամբ: Ի թիվս գեղարվեստական ու լեզվական բազմաթիվ ու բազմապիսի հնարների, և Տոլստոյն առատորեն օգտագործել է նաև դարձվածքներ, որոնք իրավամբ համարվում են դժվար թարգմանվող, իսկ երբեմն էլ «անթարգմանելի» լեզվական միություններ: Եվ դա ամենից առաջ եղելու լեզուների դարձվածքների և գրանց հիմքում ընկած պատկերավորության տարբեր միջոցների անհամատեղելիության և կապակցությունների, բառային տարրերի տարբեր աստիճանի միությունների կամ համակցումների պատճառով:

Չնայած գեղական դարձվածքների թարգմանության լիարժեք ու բազմակողմանի ուսումնասիրություններ, այնուամենայնիվ, այդ հարցին անդրազանցում են զրեթե բոլոր տեսաբանները՝ փորձելով սահմանել թարգմանական ընդհանուր օրինաչափություններ, որոնք կիրառելի լինեն բոլոր լեզուների համար: Սակայն լեզվական անջրպետները, որոնք առաջին հերթին կապված են տվյալ ժողովրդի մտածողության, ազգային խառնվածքի, լեզվական ինքնատիպության հետ, դժվարություններ են ստեղծում թարգմանական աշխատանքում, և թարգմանիչն առանձին դեպքերում ոչ միայն ստիպված է լինում ինքնուրույն կողմնորոշվել, այլև հանգամանորեն ծանոթանալ հեղինակի լեզվաոճական յուրահատկությանը, թարգմանության լեզվի հնարավորություններին: Յա. Ի. Բենցկերը թարգմանության տեսության ու պրակտիկային նվիրված իր զբոսում մի մեծ բաժին է հատկացրել դարձվածքների թարգմանությանը՝ ելակետ ընդունելով այն տեսակետը, ըստ որի «թարգմանիչը պետք է կարողանա ինքնուրույն կողմնորոշվել դարձվածքաբանության տեսության հիմնական հարցերում, տարբերակել և առանձնացնել դարձվածքաբանական միավորները, պարզել դրանց նշանակությունը և թարգմանության լեզվում փոխանցել դրանց հուշանշանական (էքսպրեսիվ) նշանակությունը»¹: Դարձվածքները թարգմանելիս թարգմանիչն անհրաժեշտ է խնայել ինքնատիպության իրոք դժվարին են. պետք է ճիշտ հաղորդվի միտքը, փոխանցվի դարձվածքի պատկերավորությունը, պահպանվի հեղինակի ոճը, ուստի թարգմանիչը պահանջվում է ոչ միայն լեզուների, այլև պատմության, առասպելաբանության, դասական ու ժամանակակից գրականության, աստվածաշնչական հասկացությունների խոր իմացություն:

Տոլստոյն այն ուսու գրողներից է, որը ձգտել է հասնել գրական և խոսակցական լեզվի միասնության և իր ստեղծագործություններում գրական լեզվի դոկերը լայնորեն բացել է ժողովրդական խոսքի համար: Սրանով է բացատրվում, թերևս, խոսքային այն ինքնատիպ խառնուրդը, որը նկատվում է «Պատերազմ և խաղաղություն» վեպի լեզվում: Այստեղ միաձուլվել են և՛ զբոսային ու դրական լեզուն, և՛ ժամանակի աղնականության խոսակցական լեզուն, և՛ ժողովրդական լեզուն: Վեպում հանդիպում ենք նաև զանազան ժարգոնների ու ժարգոնային տարրերի՝ շինվորական, գրասենյակային, թղթախաղային և այլն: Լեզվական միջոցների այս բազմազանությունը պայմանավորված է վեպում արտացոլված կյանքի տարբեր երևույթների, մարդկային բազմաբնույթ փոխհարաբերությունների մանրամասն պատկերմամբ:

¹ Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Т. Р. Левицкая, А. М. Фитерман. Проблемы перевода. М., 1976, с. 185.

² Я. И. Рецкер. Теория перевода и переводческая практика. М., 1974, с. 145.

³ См. В. Н. Крупнов. В творческой лаборатории переводчика. М., 1976, с. 118—135.

Ի և Տոլստոյի դարձվածքների թարգմանությունը և դրանց ուսումնասիրությունը հետաքրքիր է ոչ միայն թարգմանական աշխատանքի մի ուրույն բնագավառի լուսաբանման, թարգմանվող տեքստում հերոսների խոսքի ոճավորման, դրանց տարբերակման ու գնահատման, այլև ազգային թարգմանական գրականության կարևոր պրոբլեմներից մեկի՝ ուսումնասիրության տեսակետից:

Հանդիմանալի դարձվածքների ուսումնասիրության լեզվական առանձնահատկություններին՝ կիրորձներ դասակարգել դարձվածքների թարգմանությունն ըստ դրանց հուզատեսական հատկանիշների և սահմանել այն օրինաչափությունները, որոնք հատուկ են ուսական դարձվածքների թարգմանությանը: Դարձվածքների այսպիսի տարբերակումը հետաքրքիր է ոչ միայն թարգմանական դուզահեռներին ստեղծման, հերոսների խոսքի ճիշտ ոճավորման, այլև ազգային լեզվում դարձվածքների համանման դասակարգման տեսակետից:

«Պատերազմ և խաղաղություն» վեպում օգտագործված դարձվածքները կարելի է խմբավորել ըստ դրանց ծագման, գործածության ոլորտի ու իմաստի, որն ալելի գրականագիտական հիմք ունի, քան լեզվական, ալելի շատ է կապվում նյութի բովանդակության, քան լեզվական կառույցի հետ և հետևաբար՝ ալելի շատ է մոտենում թարգմանության խնդրին, քան միայն լեզվական կառույցի լեզվաբանական դասակարգումը:

Հերոսների մեծ մասին բնորոշ են արտահայտչական բնույթի դարձվածքները, որոնք ալելի տիպական, բնութագրական ու խոսուն են դարձնում կերպարները, նրանց կապում միջավայրի, ժողովրդի ազգային խառնվածքի, հոգեբանության հետ: Վեպում եղած դարձվածքները բավականին տարբերվում են՝ գլխական ծագում ունեցող դարձվածքներից մինչև բուն ժողովրդական ծագում ունեցողները, որոնք ներկայացված են ինչպես գավառական ու մայրաքաղաքային ուղղվածականների ու սպանների, այնպես էլ ժողովրդի իսկական ներկայացուցիչների լեզվում՝ գյուղացիների, զինվորների, պարտիզանների, ծառաներ, երեմն էլ՝ քաղաքի առևտրականների լեզվակներում: Այսպիսի բազմազանությունը, ինչ խոսք, դժվարացնում է նաև թարգմանական աշխատանքը և որոշակի ստեղծագործական մոտեցում պահանջում թարգմանից:

Ուսումնասիրության համար ընտրել ենք «Պատերազմ և խաղաղություն» վեպի երեք տարբեր թարգմանություններ՝ արևելահայերենը, արևմտահայերենը (համառոտ) և աղբյուրներ՝ նկատի ունենալով, որ թարգմանական դուզահեռները հնարավորություն կտան պարզելու այն ընդհանուր օրինաչափությունները, որոնք նկատվում են դարձվածքների թարգմանության ժամանակ, ինչպես նաև որոշ չափով լուսաբանելու ազգային լեզվի հարստացման այդ ուրույն ճանապարհը:

Թարգմանական տեսակետից առանձին դժվարություն չեն ներկայացնում գրքային ծագում ունեցող դարձվածքները, որոնք հատուկ են ուս մտավորականության ներկայացուցիչների լեզվին, նրանց խոսքը դարձնում են հանդիսավոր, վերամբարձ: Գրքային դարձվածքների հանդի-

4 Ն. Մ. Եանսկին նշում է, որ «դարձվածքների տարբերակումն ըստ ոճական պատկանելության և արտահայտչականության բացատրվում է նրանով, որ լեզուն հանդես է գալիս որպես մի քանի ոճերի միասնություն, որոնցից յուրաքանչյուրին հատուկ են առանձին լեզվական միջոցներ, որոնցից օգտվում են համաժողովրդական լեզվով խոսողները»: Այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Մ. Շանսկի. Фразеология современного русского языка. М., 1963, с. 127—143.

5 Տե՛ս Պ. Մ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածքանություն. Երևան, 1973; Ա. Մ. Մոլոտկով. Основы фразеологии русского языка. Л., 1977; А. В. Кунин. Фразеология современного английского языка. М., 1972; Я. И. Рецкер. Перевод фразеологических единиц.—В кн.: Итальянско-русский фразеологический словарь. М., 1982 (предисловие).

6 Հոգեվածում մեջբերված բոլոր օրինակները վերցված են «Պատերազմ և խաղաղություն» վեպի հետևյալ հրատարակություններից. Լ. Ն. Տոլստոյ. Պատերազմ և խաղաղություն. Երևան, 1975—76, թարգմ. Ստ. Զորյանի: Լեօն Թոլստոյ. Պատերազմ և խաղաղություն. Կ. Պոլիս, 1911, թարգմ. էդվարդ Ամատունի: Л. Н. Толстой. Собр. соч. в 14-ти томах. Т. 4—7, М., 1951, Leo Tolstoy. War and Peace, Transl. from the Russian by Constance Garnett, London, 1911. Այսուհետև բնագրից և Ստ. Զորյանի հայերեն թարգմանությունից արված մեջբերումների հետ տողամիջում կնշվի հատորը և էջը, իսկ էջ. Ամատունի: Կ. Գարեհույ թարգմանություններից արված մեջբերումների հետ՝ միայն էջը:

սլուծ ենք նաև վեպի հրապարակախոսական բնույթի հատվածներում, հեղինակային խոսքում և այլն: «Գրքային բնույթի դարձվածքները,— նշում է Շանսկին,— տարբերվում են կենցաղային բնույթի դարձվածքներից ինչպես իրենց գործածության ոլորտով (գործածվում են հիմնականում գրավոր խոսքում, ևնչպես էլ իրենց առանձնահատուկ, վերամբարձ, հուզառճական երանգով (գրքային, բանաստեղծական, պաթետիկ): Այդ իսկ պատճառով գրքային ծագում ունեցող դարձվածքները գրքային բառապաշարի նման հանդես են գալիս որպես բառերի կայուն կապակցություններ, որոնց գործածության ոլորտը խիստ նորմավորված գրական լեզուն է, հրապարակախոսական և գիտական ստեղծագործությունների ոճը, գրական ստեղծագործությունների լեզուն»⁷:

Գրական կամ գրքային ծագում ունեցող դարձվածքների համարժեքները հեշտությամբ կարելի է գտնել շատ լեզուներում և լեթն անգամ ազգային լեզվում դրանք չկան, ապա փոխ են առնվում, մտնում են լեզվի մեջ, դառնում լեզվական հաստատուն միավորներ: «Պատերազմ և խաղաղություն» վեպում կան այնպիսի հանրահայտ դարձվածքներ, ինչպիսիք են՝ сжечь свои корабли (4, 7), пожинать лавры (4, 152), до последней капли крови (6, 301), որոնց համապատասխան զուգահեռները գործածվում են նաև այլ լեզուներում՝ այրել բոլոր նավերը (1, 29), burn the ships (2), դափնիներ բաշել (1, 207), winning laurels (208), մինչև արյան վերջին կաթիլը (3, 380) և այլն: Նման դեպքերում թարգմանիչը, հավանաբար, պետք է դիմի ոչ թե դարձվածքի բառացի թարգմանությանը, այլ ազգային լեզվում գործածական ձևին: Այսպիսի մոտեցման դեպքում пожинать лавры դարձվածքը հայերեն ավելի ճիշտ կլինե՞ր թարգմանել դափնեից վաստակել կամ ձեռք բերել, ինչպես որ անգլերենում է: Երբեմն թարգմանվող լեզվում լինում են միևնույն դարձվածքի մի քանի տարբերակներ, որոնց ընտրությունը կախված է թարգմանից: Օրինակ, сжечь свои корабли դարձվածքը, բացի վերը նշվածից, ունի նաև մի այլ համարժեք՝ կամսուրչներն այրել, որը հայերենում ավելի գործածական է: Կարծում ենք, խմբագրային լեզվում տեղի չէր ունենա, եթե թարգմանիչը ընտրեր այս ձևը⁸:

Գրքային դարձվածքների մեջ մտնում են նաև եկեղեցական-գրքային ծագում ունեցող դարձվածքները, որոնց դիմել է Տոլստոյը ոչ միայն հերոսների խոսքը հանդիսավոր դարձնելու, այլև որոշակի հնաոճություն ստեղծելու համար: Հեղինակը պատրաստի մեջբերումներ է կատարում աստվածաբանական գրականությունից՝ հիմնականում Հին և Նոր կտակաբաններից: Ի դեպ, հարկ է նշել, որ Աստվածաշունչը դարձվածքների կամ դարձվածային միավորների կարևոր գրական աղբյուր է: Դրանք շարունակ Աստվածաշունչը աշխարհի գրեթե բոլոր քրիստոնյա երկրներում լայն տարածում ստացած և ամենից շատ կարդացվող գրքերից է եղել, ուստի բիրտական ծագում ունեցող դարձվածքների ու կայուն բառակապակցությունների դերը բոլոր ժողովուրդների լեզուներում էլ շատ մեծ է⁹: «Պատերազմ և խաղաղություն» վեպի թարգմանիչները հիմնականում հարադատ են մնացել այս կարգի դարձվածքների սկզբնաղբյուրներին: Դարձվածաբանական այնպիսի միավորներ, ինչպիսիք են семь даров святого духа (5, 184), Песнь Псалм (5, 187), древо познания (7, 17), Священное писание (5, 183) թարգմանվել են ազգային լեզվի համապատասխան համարժեքներով՝ սուրբ հոգու 7 շնորհները (2, 229), Երգ Երգոց (2, 234), իմացության ծառ (4, 19), Սուրբ գիրք (2, 228) և այլն: Մինչդեռ блудный сын (4, 14) դարձվածքը, որը հայերենում ունի իր կայուն համարժեքը՝ «անառակ որդի» թարգմանված է «մոլորյալ որդի» (1, 21):

Վեպի հերոսներից շատերին բնորոշ են նաև խոսակցական-կենցաղային բնույթի դարձվածքները, որոնք հուզաարտահայտչական ընդգծված երանգավորում ունեն և էական դեր են կատարում հերոսների խոսքը ոճավորելու առումով: Այս դարձվածքները խոսքը դարձնում են փառակերպիչ, կենդանի, ունեն փառաբանի, մտերմական, հեզնական, արհամարհական, կատակի, նախատական երանգավորում: Տոլստոյը զարմանալի հմտությամբ, լեզվի զուտ տոյս-

7 Н. М. Шанский. Указ. соч., с. 131—133.

8 Հոգվածում որպես տեսական ուսումնասիրության և եղրակախությունների հիմք օգտագործված են հետևյալ բառարանները. Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան. Երևան, 1975: Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան. Երևան, 1975: Фразеологический словарь русского языка. М., 1978; Словарь-справочник по русской фразеологии. М., 1981, Англо-русский фразеологический словарь. М., 1967.

9 S. L. Logan P. Smith. Фразеология английского языка. М., 1959, с. 10, 57, 66.

տույական զգացողությամբ կարողացել է այս տիպի դարձվածքները ներհյուսել գեղարվեստական նյութի բանվածքում՝ ձգտելով ոչ միայն վառ, արտահայտիչ ու խոստով դարձնել կերպարները, այլև պահպանել այն ազգային ոգին, որ կար նրանցում, որոշակի վերաբերմունք ստեղծել հերոսների նկատմամբ:

Ժողովրդախոսակցական բնույթի դարձվածքները, որոնք խոսքի մեջ օգտագործում են Տոլստոյի հերոսները, ոչ միայն էական դեր են կատարում նրանց խոսքի ոճավորման առումով, այլև, կարծես, մի անգամ ևս ընդգծում են նրանց կապը ժողովրդի, նրա ոգու, ազգային խառնուրդի հետ: Ահա թե ինչու երբեմն տեղին գործածված ժողովրդախոսակցական բնույթի դարձվածքը ավելի կարևոր է լինում հերոսներին բնութագրելու, տիպականացնելու համար, քան նրանց կյանքի ու գործունեության մանրամասն նկարագրությունը:

Այս տիպի դարձվածքների թարգմանությունն ունի իր ուրույն դժվարությունը, խոչընդոտները, որոնք հաղթահարելը կախված է թարգմանչի ճիշտ կողմնորոշումից, բնագրին ըմբռնելուց և վերստեղծելուց, նրա ստեղծագործական կարողություններից: Ի դեպ, պետք է նշել, որ Տոլստոյի սովորությունն ունի փոփոխելու ժողովրդախոսակցական բնույթի դարձվածքները և ներկայացնելու իր տարբերակով: Այս առիթով «Պատերազմ և խաղաղություն» վեպի ուկրաինյան թարգմանության հեղինակ, սլավոնիկ և տեսական թարգմանությամբ զբաղվող Օլեկսի Կունձիլը գրում է. «Տոլստոյի անանցանելի, ինչպես Տուրգենևն էր ասում, պարբերությամբ, որտեղ գեղարվեստական հանձարեղ հայտնությունները հաճախ արվում են իմաստաբանական խառը բառապաշարով և պայմանական, քերականության մեջ շնչված, անհատական, տոլստոյական և միաժամանակ ուսական ազգային դարձվածաբանությամբ, որոշ իմաստով ընդհանրապես անթարգմանելի են»¹⁰: Որպեսզի հաղթահարվի այդ «անթարգմանելիությունը», հանձարեղ գրողի ստեղծագործությունների թարգմանչի առջև կանգնում է մի շատ կարևոր խնդիր՝ հաղթահարել նրա մտքի անդամ աննշան նրբերանգները, նրա լեզվի առանձնահատկությունները:

Հուզաարտահայտչական բնույթի դարձվածքները, որոնցով հարուստ է հատկապես ժողովրդական խոսակցական լեզուն, վերստին գործածվում են սոցիալական տարբեր ծագում ունեցող հերոսների խոսքում: Այնպիսի դարձվածքներ, ինչպիսիք են «что греха таить» (4, 75), «в меня пошел» (4, 75), «голова кругом идет» (6, 321) իրենց գուղահեռներն ունեն նաև հայերենում և անգլերենում՝ «մեղքս ինչ թաքցնեմ» (1, 88), «ինձ է քաշել» (1, 87), «She takes after me» (47), «My head is going round» (1087): Զորյանը ճշտորեն պահպանելով голова кругом идет դարձվածքի իմաստային նշանակությունը, ընտրել է մի այլ տարբերակ՝ «ես գլուխս կորցրել եմ» (Յ. 405), որը ճշտորեն արտահայտում է ուսական դարձվածքի իմաստը և զրանով իսկ նաև՝ Իլյա Թոստովի հոգեվիճակը՝ Մոսկվայից շուտափույթ հեռանալու, Մոսկվան լքելու հետ կապված նրա ծանր ապրումները:

«Պատերազմ և խաղաղություն» վեպի հայ թարգմանիչները ժողովրդախոսակցական բնույթի դարձվածքները թարգմանել են՝ ձգտելով պահպանել դարձվածքների իմաստային և կառուցվածքային լիարժեքությունը: Թարգմանիչները լիարժեք համարժեքության հասնում են, երբ պահպանում են և՛ ձևը, և՛ բովանդակությունը: Հարկ է նշել, որ թարգմանության տեսաբաններից շատերը լիարժեք համարժեքության մեջ մտնում են նաև այն դարձվածքները, որոնցում պահպանված է իմաստը, սակայն փոխված է ձևը: Նման «մասնակի» դարձվածքային համարժեքներում փոփոխվում է պատկերը: Այսպես, օրինակ, «Бонапарте в рубашке родился» (1, 129) դարձվածքը հայերենում և անգլերենում գործածված է հետևյալ ձևով.

«Բոնապարտը բախտավոր աստղի տակ է ծնվել» (1, 179):	«Պոնաբարդը պարզ շապիկի մէջ է ծնած» (170):	«Bonaparte was born with a silver spoon in his mouth» (120).
--	--	--

Ի դեպ, ուսական դարձվածքին, պատկերի համարժեքության տեսակետից, հարապատ է մնացել միայն Ամատունին, սակայն գեղարվեստականության առումով այն շատ ավելի թույլ է և հայերենի համար անիմաստ: Կամ՝ «В его немецкой голове только рассуждения, не стоящие выведенного яйца» (6, 214) նախադասությունը թարգմանվել է.

¹⁰ О. Л. Кундзинч. Слово и образ. М., 1973, с. 21.

«Նրա գերմանական գլխում միայն դատողություններ կան, որ կուրելի աժեֆ չունեն» (3, 269):

«Որովհետև իրենց գերմանացի գլուխներուն մէջ փառաւ ըն շարժեցող պատճառաբանութիւններ ունին միայն» (895):

«Because they have nothing in their German noddles but caleulations, that are not worth a rotten egg» (977).

Ընդգծված դարձվածքները, հեռանալով պատկերից, սակայն հարազատ մնալով իմաստին, լիակատար համարժեքություն են ստեղծել ռուսական դարձվածքի հետ: Կոնստանս Գարնետը ճշտորեն ղեկավարելով իշխան Բուկոնսկու խոսքում օգտագործված ռուսական դարձվածքի իմաստալիկ նշանակությունն ու ոճական արժեքը, *тогда еще* (հետո, նեխած ձու) բառակապակցության միջոցով ստեղծել է իմաստային համարժեք: Նույնքան հաջող են ընտրված նաև հայերեն տարբերակները:

Կան դարձվածքներ էլ, որոնց թարգմանությունը, ճիշտ է, ստանձնահատուկ դժվարություն չի ներկայացնում, բայց որ ազգային լեզվում դրանց համարժեքները կան, սակայն դրանց բառացի թարգմանությունը և այդ պատճառով անխուսափելի դարձող առանձին նրբերանգների կորուստը կարող է շինծու և արհեստական դարձնել հերոսների խոսքը: Օրինակ, «*МѢСЯЦЪ НЕ ОДИНЪ*» (5, 321) արտահայտությունը Ստ. Զորյանը թարգմանել է՝ «ճանճի էլ չի նեղացնի» (2, 402), իսկ էդ. Ամատունին՝ «ճանճի մը անգամ վնաս չի հասցնի» (649), որն անբնական և օտար է հնչում հայերեն: Ժիշտ կլինի, եթե թարգմանիչները ընտրեին պատկերով (ձևով) տարբեր, սակայն իմաստային նույն արժեքն ունեցող «միջուկն էլ չի տրորի» տարբերակը: Այս նրկատառումով է, որ Զորյանը «*МОЛОКО ЕЩЕ НЕ ОБОСЛО*» (6, 83) արտահայտությունը թարգմանել է ոչ թե բառացի, այլ ընտրել դարձվածքի հայերեն համարժեքը՝ «Բերանից դեռ կարի կուտ է գալիս, իսկ նա ծառայության է ուղարկ գնալ...» (3, 111),—ասում է Իլյա Ռոստովը որդուն՝ Պետյային: Ամատունին ընդհանրապես հեռացել է պատկերից և դարձվածքը թարգմանել մեկ այլ բառակապակցությամբ՝ «Երեկի անխելիք դեռ, շարունակեց կոմսը, և կուղե բանակ երթալ» (777):

Թարգմանության ժամանակ հանդիպող երևույթներից է բառերի ավելացումը. որից շնչկարող խուսափել թարգմանիչները: Դա պայմանավորված է տարբեր հանգամանքներով՝ երկու լեզուների կառուցվածքային տարբերություններից սկսած մինչև ոճական առանձնահատկությունները: Ինչպես իրավացիորեն նշում է Լ. Բարխուդարովը, ավելացումների հաճախ կարելի է հանդիպել ռուսերենից անգլերեն կատարվող թարգմանություններում, որոնք նպատակ ունեն ոճավորելու հերոսների խոսքը: Ստորև բերվող օրինակում այդպիսի դեր կատարում է *hardly* բառը, որը ընդգծում է ռուսական դարձվածքի այլաբանական իմաստը, նպաստում է ճիշտ ընկալմանը՝ «*The milk hardly dry on his lips, and he wants to go into the army*» (844):

Այս կարգի դարձվածքներով հարուստ է Իլյա Ռոստովի, Ախրոսիմովայի, Նիկոլայ Բուկոնսկու խոսքը: Անմիջական, գունեղ, պարզ և ժողովրդական հումորով հարուստ է Ախրոսիմովայի խոսքը. «*Ты что, старый греховодник,—обратилась она к графу,—чай, скучаешь в Москве? Собак гонять негде?...*» (I, 176): Սովորաբար թարգմանության տեսության շատ մասնագետներ խորհուրդ են տալիս բուն ազգային դարձվածքները նույնությամբ փոխադրել, պատճառներ՝ պահպանելու համար ժողովրդական լեզվի առանձնահատկությունները, ազդային բնորանգը, մտածողությունը և այլն¹²: Սակայն միշտ չէ, որ դարձվածքների պատճենումը արդարացվում է, հաճախ թարգմանվող լեզվում այն դառնում է անգույն, անկենդան, չի հաղորդում դարձվածքի այն նրբերանգները, որոնք կարևոր են տվյալ համատեքստում: Վերը նշված հատվածում այդպիսի էական նշանակություն ունի «*собак гонять негде*» դարձվածքը, որը թարգմանվել է.

«Շուն խաղացնելու տեղ չկա» (1, 115):

«Որսկան շներն արձակելու տեղ չկա» (104):

«Nowhere to go out with the dogs» (70).

Ինչպես պարզ երևում է, Ամատունին և Գարնետը փորձել են նույնությամբ փոխադրել ռուսական դարձվածքը, սակայն այն ոչ միայն տեքստում չի ըմբռնվում ինչպես հարկն է, այլև բոլորովին չի հաղորդում բնագրի երգիծական երանգը, որի միջոցով Ախրոսիմովան ծաղրում է

¹¹ Մանրամասն տե՛ս Լ. Ս. Бархударов. Язык и перевод. М., 1975, с. 221—226.

¹² Տե՛ս Կ. Чуковский, А. Федоров. Искусство перевода. Л., 1930, с. 39.

մայրաքաղաքային կյանքը, աղնվականների անգործությունը: Բնագրին շատ ավելի մոտ է Չորյանի տարբերակը: Կարծում ենք, երգիծական շեշտը կարելի էր հաղորդել նաև ընտրելով: «այլրենում օգտագործվող շշուռն փախցնելու տեղ չկա» դարձվածքը:

Կամ՝ «Яйца курицы учат» (6, 322).— արցունքների միջից ուրախ ասում է կոմս Էլյա-Ռոստովը, երբ լսում է նատաշայի հանդիմանական խոսքը ուղղված մորը, որը չէր ցանկանում իրենց հետ վերցնել վիրավոր զինվորներին: Ե՛վ Չորյանը, և՛ Գարնետը նույնությամբ պատ-ճենել են դարձվածքը՝ «Չվերը հավերին սովորեցնում են» (3, 406), մինչդեռ Ամատունին ընտ-րել է արևմտահայերեն հիանալի տարբերակը՝ «Չագերը հավերուն խրատ կուտան» (978), որը սովելի դիպուկ է, բան բառացի թաղանթաված տարբերակները: չէ՞ որ խոսքն իրոք երեխաների և ժողովրդի փոխհարաբերության մասին է: Նատաշան այնքան է մեծացել, որ արդեն քննա-դատում է մորը:

Մեր Բուկոնսկու խոսքը ևս կրում է ժողովրդական լեզվի ազդեցությունը: Նրա խոսքին հատ-կապես նորաբարտաշխտչական երանգ են տալիս ժողովրդաստակցական բնույթի դարձվածք-ները: Այսպես, «Первый встречный оказался—отец и все забыто, и бежит, кверху при-чесывается и хвостом виляет и сама на себя не похожа. Рада бросить отца!» (4, 281).

Բերված օրինակում ծեր իշխանը արտահայտել է և՛ իր հայրական սերը դստեր նկատմամբ, և՛ դայրությունը՝ աղջկա շտապ որոշման և նրան անարժան մարդու հետ ամուսնացած տեսնելու վերաբերյալ, և՛ միայնակ մնալու սարսափը: Ահա թե ինչու նրա խոսքը դիպուկ է, սուր, նրա բնավորությանը հատուկ խիստ և հեզանական շեշտվածությամբ: Արևելահայերեն թարգմանու-րյան մեղ տեքստային որոշ մանրամասների բացակայության և իմաստային նրբերանգների կո-րուստի պատճառով հոգեբանական այդ նուրբ անցումները չեն հաղորդվել. «Առաջին պատահու-կան մարդը երևաց թե չէ, մոռացավ թե՛ հայր, թե՛ ամեն ինչ. վազում է վեր, սանրվում ու պո-չալով... Ուրախ է, որ հորը կթողնի» (1, 366): Թարգմանչի ուղադրությունից դուրս է մնացել «сама на себя не похожа» դարձվածքը, որն իմաստային որոշակի արժեք ունի՝ Փո-խարեական ընդգծված նշանակություն ունի նաև «хвостом виляет» դարձվածքը, ուստի շատ ավելի դիպուկ և տեղին կլինեք ընտրել «պոչ խաղացնել» հայերեն տարածված տարբերակը:

Մեր կարծիքով՝ դարձվածքների թարգմանության կարևոր խնդիրներից մեկն էլ պետք է լինի դարձվածքը դարձվածքով փոխարինելու սկզբունքը. չէ՞ որ դրանք ինչպես նախադասու-թյան, այնպես էլ հերոսի խոսքի կառուցվածքում որոշիչ դեր են կատարում: Անգամ պատճեն-ման դեպքում թարգմանչի խնդիրը պետք է լինի դարձվածքային տարբերակ ստեղծելը և միայն ծայրահեղ դեպքում պետք է դիմել նկարագրական կամ ոչ դարձվածքային թարգմանության: Անշուշտ, այսպիսի թարգմանությունը, նույնիսկ նկատի ունենալով համատեքստի լրացնող, փո-խարինող տարրը, չի կարելի համարել լիարժեք. միշտ էլ լինում են պատկերավորության, հու-զաարտահայտչականության, աֆորիստականության և իմաստային որոշ նրբերանգների կո-րուստներ¹³: Նրբեմն էլ ոռոտական դարձվածքը հայերենում կամ անգլիերենում թարգմանվում է մեկ բառով, որը, ճիշտ է, դարձվածք չէ, սակայն ճիշտ է հաղորդում իմաստը. «Нет опат, иибо там вы все с ума сошли, было я из ума выжил» (4, 129). С ума сойти դարձվածքը հայերենում թարգմանվել է մի բառով՝ խնրանալ, իսկ «из ума выжить» — խնիր քոցնել (1, 78):

Վեպում բավականին շատ դարձվածքներ են օգտագործված ինչպես բանական ծառայող սպանների, այնպես էլ գյուղացիության, զինվորների, պարտիզանների ու սպասավորների խոս-րում: Դրանք աչքի են ընկնում ազգային շեշտված երանգավորմամբ, պատկերավորությամբ, ի-մաստային զանազան նրբերանգներով: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թարգմանիչները հատկապես դժվարանում են այսպիսի դարձվածքները թարգմանելիս, մինչդեռ դրանք բացառիկ դեր են կատարում ժողովրդական խոսքը ոճավորելու առումով: Նման դեպքերում հաճախ կառ-չելով տեքստից թարգմանիչները կուցնում են էականը՝ ոչ միայն դարձվածքի կոլորիտայնու-թյունը, ժողովրդայնությունը, այլև իմաստային ու հնչերանգային նրբերանգները: Օրինակ, «Я правду-матку скажу» (4, 167) դարձվածքը թարգմանվել է.

«ես ճշմարտությունը կա-սեմ» (1, 173):

«Իսկ ես միշտ ճշմարտու-թյունը կըսեմ» (225):

«I always speak the plain truth» (160).

¹³ Տե՛ս Ս. В ла х о в, С. Ф л о р и н. Непереводимое в переводе. М., 1980, с 192--193, 200.

որոնք, իհարկե, ճիշտ հաղորդելով բովանդակությունը, կորցրել են բնագրի պատկերավորությունն ու արտահայտչականությունը: Կարծում ենք, հայ թարգմանիչները կարող էին օգտագործել «Ճշմարտությունը երեսին ասել» դարձվածքը: Կամ՝ «Сказано, порядок чтоб был. не ездил никто из домов, чтобы ни снны пороха не вывозить...» (6, 166): Սովորաբար «պատկերավոր դարձվածքների թարգմանությունը,— գրում է Վ. Կոմիսարովը,— թարգմանիչ համար որոշակի դժվարություն է ներկայացնում նաև այն առումով, որ երբեմն վտանգ կա դարձվածքային միավորը ազատ բառակապակցության տեղ ընդունելու, կամ էլ, ելնելով պատկերի բնույթից, սխալ մեկնաբանելու նրա նշանակությունը»¹⁴: Եվ իրոք, վերը նշված օրինակում *снны пороха* դարձվածքը թարգմանվել է՝ «Ասված է, որ կարգ լինի, ոչ մեկը չգնա իր տնից» որ վատագույն շտապեք: Էս է բոլորը,— բռնում էր մի ուրիշը» (3, 209): Ինչպես պարզ երևում է, դարձվածքը թարգմանվել է բառացի՝ կորցնելով իր իմաստային նշանակությունը: Թինչդեռ այն ոչ միայն դարձվածք է, որը պետք է թարգմանել կառուցվածքային նույնատիպ համարժեքով, այլև: ունի ընդգծված այլաբանական իմաստ՝ նշանակում է «չոքի անգամ դուրս չպետք է տարվի»: Նկարագրական եղանակով է թարգմանել Գարնետը՝ պահպանելով իհարկե, իմաստային արժեքը: «... no one to leave their homes and nothing to be moved away and that all about it!» (694): Դժվար է թարգմանել նաև «стречка задавать» դարձվածքը: «То-то мы с горы увидали, как ты стречка задавал через лужи-то» (7, 139), որն, ի դեպ, այն կարգի դարձվածքներից է, որոնց պատճենումը անհրաժեշտություն չէ և ընդգծված ազգային երանգավորում չունի: Հայերենում ոչ միայն չի պահպանվել դարձվածքի բուն իմաստը, այլև: կորել է հերոսի խոսքի գիպությունը: «Մենք սարից տեսանք, թե դու ինչպես էիր թռչում ջրերի վրայով» (4, 145), այնինչ կարելի էր գտնել համապատասխան զուգահեռներ կամ համարժեքներ՝ փախուստ առլ, նողմալի, ծվել: նման դեպքերում, կարծում ենք, եթե դարձվածքը հնարավոր չէ դարձվածքային համարժեքով փոխարինել, ապա ընտրված տարբերակը թարգմանվող լեզվում պետք է լինի ճիշտ, գիպուկ: Բացի այդ, հերոսը նողմալիում է ոչ թե ջրերի վրայով, ինչպես թարգմանված է, այլ ջրափոսերի: Կոնստանս Գարնետը վերցրել է անգլերենում գործածական «give somebody the slip» (ճողողալ, ծվել, ինչ-որ մեկից փախուստ տալ) դարձվածքը և թարգմանություն մեջ հասել համարժեքության: «We saw from the hill how you gave them the slip...» (315):

Դարձվածքները հետաքրքիր ու կոյրիրտային են դարձնում նաև Կարպի խոսքը: «Ты мур-то поедом ел сколько годов? Тебе все одно! Ты кудышнык выроешь, увезешь, тебе что...» (6, 166),— ասում է նա նախկին տանուտեր Դրոնին: Ընդգծված դարձվածքները հայերեն թարգմանվել են ժողովրդի աղյուսը ծծել (ավելի գիպուկ կլինե՞ր՝ ժողովրդի հոգին հանել, որ ու արև շտալ—Ռ. Տ.-Գ.) և գրպանը լցնել (3, 209): Զորյանը բավականին հետաքրքիր է լուծել *кудышнык вырыть* դարձվածքի թարգմանությունը: Այն անիմաստ կլինե՞ր, եթե թարգմանիչը որոշեր պատճենել կամ նույնությամբ՝ նույն պատկերով, փոխադրել իմաստը: Զորյանի տարբերակը պահպանում է հերոսի լեզվի ոճական առանձնահատկությունները, հաղորդում է այն կծու հեգնանքը, որն ուղղված էր նախկին տանուիրոջը, որը Բողոշարովի ըմբոստ գլուխացիների շարքում չէր:

Վեպում հանդիպում ենք ծածկաբանական կամ պայմանական բնույթի դարձվածքների, որոնք հիմնականում ներկայացնում են թղթախաղային և մասոնական տերմինաբանությունը: Ինչպես գիտենք, ծածկաբանական կամ պայմանական լեզվի բառաբաններ գրեթե չկան, դրանք չեն մտնում գրական լեզվի մեջ, սակայն ինչպես ժարգոններ, մասնագիտական տերմիններ, այնպես էլ ծածկաբանական դարձվածքները օգտագործվում են գեղարվեստական ստեղծագործություններում, ուստի դրանց թարգմանությունը ևս դարձվածքների թարգմանության պրոբլեմային հարցերից մեկն է: Այս տիպի դարձվածքները գրականության մեջ հատկապես հաճախ են օգտագործվել XVIII դարի վերջում և XIX դարի ընթացքում, քանի որ կային թղթախաղի որոշ տեսակներ, որոնք խիստ տարածված էին և մասսայականություն էին վայելում: Թղթախաղը որոշակի կոլտուրական իրողություն է (реалия), որը կապված է տվյալ դարաշրջանի մտածողության, սովորությունների, առանձին դասակարգի կամ խավի անհատական խառնուրդների հետ: Այս առումով բավականին հետաքրքիր է Յու. Լոտմանի «Тема карт и карточных»

¹⁴ В. Н. Комиссаров, Я. И. Рецкер, В. И. Тархов. Пособие по переводу с английского языка на русский. Ч. 1, М., 1960, с. 53.

игрив в русской литературе XIX века» հոգվածը, որտեղ հեղինակը փորձում է ղուգահեռներ տնցկացնել իդիոսիաղի օրհնքների, սկզբունքների, ձևերի ու դարաշրջանի հասարակական կյանքի, մարդկային փոխհարաբերությունների, նրանց նակատագրերի, հաջողության, մարդկային կյանքի ակտիվության միջև, որը բաղմիցս դրսևորվել է և՛ ռուս, և՛ համաշխարհային գրականության մեջ¹⁵։ Այս կարգի դարձվածքների թարգմանությունը որոշակի դժվարություն է ներկայացնում, բանի որ դրանք մեծ մասամբ դուրս են եկել գործածությունից և ընթերցող լսչն շրջանների համար անծանոթ են։ Ուստի թարգմանիչն առաջին հերթին իր համար պետք է պարզի դրանց իմաստային նրբերանգները, քանի որ թղթախաղային այդ գործողություններով պայմանավորված է հերոսների հոգևիճակը, վարքագիծը¹⁶։ Լև Տոլստոյը հավատարիմ է մնացել դարաշրջանին նաև այս հարցում՝ նկարագրելով այն խաղատեսակները, որոնք ամենից ավելի դրսևածական էին դարասկզբին։ Այսպես, օրինակ, վեպի հերոսներից մեկը՝ Ժորժիկին հրավիրում է թղթախաղի. «Что же, приходим к нам когда вечерком, фараон заложит» (4, 150)։ Խաղի անունը պահպանել և փորձել է համանման դարձվածք ստեղծել թարգմանիչներից միայն Կ. Գարնետը. «I say, come round to us some evening, we'll have a game of faro,—said Zherkov» (142)։ Հայերեն թարգմանություններում կրճատված է խաղի անունը, մինչդեռ այն էական դեր է կատարում դարաշրջանի բներանգը պահպանելու։ առումով՝ դարասկզբին այն ամենատարածված խաղերից մեկն էր ոչ միայն Ռուսաստանում, այլև ամբողջ եվրոպայում. «Իրիկունն արի մեղ մոտ թուղթ խաղանք» (1, 205), «Իրիկունը մեղի իկուր, գրաւ կը բռնես,— բւսւ ժերգով» (494)։

Հատկանշականն այն է, որ հայ թարգմանիչները, այնուամենայնիվ, ձգտել են դարձվածք թարգմանել դարձվածքային համարժեքով։ Ռոմանտիկ, «ճակատագրական» մարդ է համարում իրեն Դոլխովը՝ Նիկոլայ Ռոստովի հետ թուղթ խաղալիս։ Ամատունին ստորև բերվող օրինակում ևս հրաժարվել է նշել խաղի անունը, այնինչ բանկը ևս դարասկզբին տարածված խաղերից էր. «Дождитесь, чтобы вы играли в банк» (464)։ Սրանք համարվում են միջադեպի խաղեր և դրանց անվանումը բոլոր լեզուներում էլ կարելի է պահել, իսկ տվյալ դեպքում դա անհրաժեշտ է պատմաշրջանի ճշգրտ վերստեղծման տեսակետից. «Долохов метал банк» (5, 153), «Dolohov was keeping the bank» (40), «Դոլխովը բանկ էր ղցում» (2, 66)։ Թարգմանիչները չեն կարողացել պահել նաև «отогнуть угол» (5, 158) դարձվածքի համապատասխան ղուգահեռները և դիմել են իմաստը նկարագրական եղանակով թարգմանելուն. «Ռոստովը հնազանդությանը խաղաթղթի ծալած անկյունը ուղղելով նախատեսված 6000-ի փոխարեն ինամբով գրեց 21» (2, 72), «turned down the corner» (418)։ Կարծում ենք, որ նման դեպքերում թարգմանիչները պետք է որոշ տեղեկություններ տան գարձվածքի ավելի կոնկրետ նշանակության մասին՝ լիակատարում կամ տողատակում, նկատի ունենալով վեպի թարգմանության յամանակաշրջանը, ընթերցողին¹⁷։

Այսպիսով, Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպում բավականաչափ առատորեն օգտագործված տարաբնույթ դարձվածքների թարգմանությունների դիտարկումից պարզվեց, որ լեզվական այդ միավորների թարգմանությունը որոշակի դժվարություն է ներկայացնում և անհրաժեշտ է, որ տեսականորեն մշակվեն դրանց թարգմանության ամենաընդունելի և նպատակահարմար ձևերն ու եղանակները աղգային լեզուներում։ Լեզվական այդ միավորների թարգմանության դժվարությունը, ինչպես ցույց տվեց վերլուծությունը, ոչ միայն լեզվական է, այլև գեղարվեստական, եթե գործ ունենք գեղարվեստական տեքստի հետ, որովհետև գրունք մեծ մասամբ խոսքի պատկերավորման ու ոճավորման, մտքերն այլաբանորեն կամ փոխաբերաբար արտահայտելու միջոց են։ Որպես այդպիսիք դարձվածքները բոլոր լեզուներում չէ, որ իրենց համարժեքներն ունեն, բոլոր լեզուներում չէ, որ դրանք նույն բովանդակությունը կամ արտահայտման նույն ձևն ունեն։ Հենց այս հանգամանքներն էլ դժվարացնում են դրանց թարգմանությունը։

¹⁵ Сб. Труды по знаковым системам. VII, Ученые записки Тартуского гос. университета, вып. 365. Тарту, 1975.

¹⁶ Сб. А. И. Молотков. Основы фразеологии русского языка. Л., 1977, с. 213—217.

¹⁷ Անկյունը թղթախաղում խաղաղումարի բառորդ մասն է, որը հայտարարելիս ծալվում է թղթախաղի եզրը։

Բազմապիսի ու բազմաբնույթ փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում, հմուտ ու գործիմաց թարգմանիչների պրակտիկ գործունեության շնորհիվ մշակվել ու մշակվում են լեզվական այս կարգի միավորների թարգմանության որոշակի սկզբունքներ, որոնք սրտում ունեն ընդհանուր դառնալու բոլոր լեզուների համար: Եվ այնուամենայնիվ, բացի ընդհանուր թարգմանական նորմերից կամ չափանիշներից, որոնք լեզվաբանական տեսակետից համընդհանուր են, կան նաև գեղարվեստական կողմը ապահովող լրացուցիչ շախմատներ, որոնք այս կամ այն դարձվածքի գրական, գեղարվեստական դերի ճիշտ գնահատման և վեոստեղծման առումով էական ու կարևոր են: Ինչպես տեսանք, գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանության ժամանակ առաջնային են դառնում ազգային լեզուն ու նրա ոճական հնարավորությունները, քանի որ թարգմանություններում բնագրի գեղարվեստական կողմը կարող է պահպանվել միայն մայրենի լեզվի դարձվածքների և խոսքի արտահայտչամիջոցների առավելագույն օգտագործման շնորհիվ: Միաժամանակ հարկ է նշել, որ վարձվածքների թարգմանությունն ու դրանց ուսումնասիրությունը անսահմանափակ հնարավորություններ են ստեղծում նաև ազգային լեզվի հարստացման համար. այդ դարձվածքներից շատերը մտել են ժողովրդախոսակցական լեզվի մեջ և գործածական են:

Լ. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպի էրեք տարբեր թարգմանությունների համեմատական-դուգադրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արտահայտչաճանկան (экспрессивно-стилистическое) դարձվածքները և կալուն բառակապակցությունները, որոնք շատ ավելի հաճախ են հանդիպում գեղարվեստական գրադասության մեջ, հայերեն պետք է թարգմանվեն հիմնականում համարժեք դարձվածքներով կամ կալուն բառակապակցություններով: Միայն այսպիսի մոտեցումը թարգմանությունը կդարձնի գունեղ, բնագրին հասարժեք, և հերոսների խոսքի ոճավորման հարցը իր ճիշտ լուծումը կստանա: Բացառություն կարող են կապմել այն դարձվածքները, որոնք ազգային ընդգծված երանգավորում ունեն և դրանց պատկանում կամ բառացի թարգմանությունը բնագրի ճիշտ վերստեղծման, ազգային բներանգի պահպանման համար կարևոր է: Անգամ այսպիսի դեպքերում թարգմանչից պահանջվում է ստեղծագործական մոտեցում: Նկարագրական թարգմանության պետք է դիմել ծայրահեղ դեպքում, քանի որ խիստ տուժում է թարգմանության գեղարվեստական կողմը:

К ВОПРОСУ СТИЛИСТИЧЕСКОЙ АДЕКВАТНОСТИ ОРИГИНАЛА И ПЕРЕВОДА

(по роману Л. Толстого «Война и мир»)

Р. А. ТЕР-ГРИГОРЯН

Резюме

Проблема перевода фразеологизмов интересна не только как средство воссоздания речи героев, но и как одна из актуальных задач национальной переводческой литературы, требующая специального и многостороннего изучения. В статье рассматриваются переводы русских фразеологизмов на восточноармянский, западноармянский и английский языки с учетом их экспрессивно-стилистических свойств, а также указываются общие закономерности, которые выявляются при переводе.